ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման ու զարգացման սույն հայեցակարգով (այսուհետ՝ Հայեցակարգ) սահմանվում են Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման նպատակը, խնդիրները, սկզբունքները, ինչպես նաև դրանց խրախուսման համար կիրառվելիք մեխանիզմները և ակնկալվող արդյունքները:

1.2. Հայեցակարգի իրավական հիմքերն են Համալսարանի կանոնադրությունը, Համալսարանի 2023-2027թթ. Զարգացման ռազմավարական ծրագիրը, Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունը, Համալսարանում գիտության և հետազոտության միջազգայնացման քաղաքականությունը, ՀՀ օրենքը «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին», ՀՀ կառավարության 25.12.2008թ. N1558-Ն որոշումը «ՀՀ-ում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին», ՀՀ կառավարության N935 որոշումը «ՀՀ գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին», ՀՀ օրենքը «ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին», ինչպես նաև այլ իրավական ակտեր:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1. Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունից բխող հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման նպատակն է ամրագրված ուղղություններով Համալսարանում գիտահետազոտական գործունեության առավել նպատակաուղղված զարգացումը:

2.2. Համալսարանի գիտահետազոտական գործունեության զարգացման քաղաքականությունից բխող հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանման խնդիրներն են ամրագրված ուղղություններով.

2.2.1. կրթական բոլոր աստիճաններում ուսումնական և գիտահետազոտական գործընթացների ինտեգրումը, մասնավորապես, հանրակրթություն-բարձրագույն կրթություն - հետազոտություն - նորարարություն «քառակուսու» ձևավորումն ու հետագա զարգացումը,

2.2.2. գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում գիտահետազոտական գործունեություն իրականացնելու հմտությունների զարգացումը,

2.2.3. գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի ներգրավվածության խթանումը,

2.2.4. միջազգային բարձր վարկանիշավորմամբ գիտական ամսագրերում, միջազգային գիտաժողովների ժողովածուներում տպագրության խթանումը,

2.2.5. հանրապետական և միջազգային գիտաժողովներին գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի մասնակցության խթանումը,

2.2.6. ՀՀ և օտարերկրյա գիտակրթական կառույցների հետ գիտական համագործակցության ընդլայնումը,

2.2.7. լավագույնների խրախուսումը՝ վերջնարդյունքում ակնկալելով ունենալ լավագույնս մոտիվացված գիտահետազոտական գործունեության ծավալող աշխատակից և/կամ ուսանող,

2.2.8. **գիտական դպրոցների առկայությունը** (գիտական դպրոցը գիտական ղեկավարի /գիտական աստիճան ունեցող/ գլխավորությամբ որոշակի ոլորտում գիտական հետազոտություններ իրականացնող հետազոտողների խումբ է, որոնցից առնվազն 2-ը վերջին 10 տարիների ընթացքում ստացել են գիտական աստիճան) **և/կամ դրանց հիմնադրման հնարավորությունը** (համարվում է, որ հնարավոր է հիմնադրել գիտական դպրոց, եթե առկա է գիտական ղեկավարի /գիտական աստիճան ունեցող/ գլխավորությամբ որոշակի ոլորտում գիտական հետազոտություններ իրականացնող հետազոտողների խումբ, որի գիտական աստիճան չունեցող յուրաքանչյուր հետազոտողի հեղինակությամբ վերջին 10 տարիների ընթացքում տպագրվել է առնվազն 6 գիտական հոդված, այդ թվում առանց համահեղինակների՝ առնվազն 2-ը) **և/կամ հետազոտական լաբորատորիաների ձևավորումը** (մասնավորապես, ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման բազային ծրագրերի շրջանակում հիմնադրված),

2.2.9. գիտական հետազոտությունների արդյունքների հնարավոր առևտրայնացումը:

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների սահմանման սկզբունքներն են.

3.1.1. Համալսարանի գիտամանկավարժական համակազմի առկա գիտական ներուժը,

3.1.2. վերջին 5 տարիներին գիտամանկավարժական համակազմի կողմից ծավալած գիտահետազոտական գործունեության արդյունքների առկայությունը (մասնավորապես, հրատարակված հոդվածներ, մենագրություններ և այլն):

3.2. Հիմք ընդունելով 3.1. կետում ամրագրված սկզբունքները՝ Համալսարանի Զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումից հետո՝ առաջիկա ուսումնական տարում, Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի ներկայացմամբ Գիտական խորհրդի որոշմամբ տվյալ Զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում հաստատվում են Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները:

3.3. Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման հիմնական ուղղությունների (ըստ 3.2. կետի) հենքի վրա առաջնահերթությունների սահմանման հիմնական սկզբունքներն են.

3.3.1. տվյալ գիտահետազոտական ուղղությունը պետք է նպաստի ՀՀ համար կարևորագույն նշանակություն ունեցող ռազմավարական խնդիրների լուծմանը. մասնավորապես, պետք է միտված լինի բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական, մաթեմատիկական (ԲՏՃՄ/STEM) ուղղությունների զարգացմանը,

3.3.2. տվյալ գիտահետազոտական ուղղությունը պետք է նպաստի միջազգայնորեն հեռանկարային համարվող գիտահետազոտական խնդիրների լուծմանը. մասնավորապես, հետազոտության արդյունքները պետք է ներկայացված լինեն SJR-ի Q1, Q2, Q3, Q4 քառորդներում ընդգրկված գիտական ամսագրում,

3.3.3. տվյալ գիտահետազոտական ուղղությամբ պետք է հնարավոր լինի հիմնադրել գիտական դպրոց. մասնավորապես, հետազոտական խմբի գիտական աստիճան չունեցող յուրաքանչյուր հետազոտողի հեղինակությամբ վերջին 10 տարիների ընթացքում պետք է տպագրված լինի առնվազն 6 գիտական հոդված, այդ թվում առանց համահեղինակների՝ առնվազն 2-ը:

3.4. Համալսարանի Զարգացման ռազմավարական ծրագրի հաստատումից հետո՝ առաջիկա ուսումնական տարում, Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի ներկայացմամբ Գիտական խորհրդի որոշմամբ տվյալ Զարգացման ռազմավարական ծրագրի շրջանակում հաստատվում են Համալսարանում գիտահետազոտական գործունեության զարգացման առաջնահերթությունները, որոնք են.

ա) հայագիտությունը, որպես ՀՀ ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնագավառ,

բ) 3.3.1.-3.3.3 կետերում ներկայացված սկզբունքներից առնվազն երկուսին բավարարող հիմնական ուղղությունները:

4. ԸՍՏ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Սահմանված առաջնահերթությունների (ըստ 3.4 կետի) ուղղությամբ գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մեխանիզմներն են.

4.1.1. Համալսարանում գիտահետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների մշակումը և կիրառումը,

4.1.2. գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի շրջանում վերապատրաստումների/լրացական, ոչ ֆորմալ դասընթացների կազմակերպումը՝ միտված գիտահետազոտական գործունեություն իրականացնելու հմտությունների զարգացմանը,

4.1.3. ներբուհական դրամաշնորհի տրամադրումը,

4.1.4. Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման համար տարբերակված մոտեցմամբ լրավճարի տրամադրումը,

4.1.5. ՀՀ և օտարերկրյա գիտակրթական կառույցների հետ համագործակցության խթանումը,

4.1.6. գիտամանկավարժական կազմի գիտահետազոտական գործունեության արդյունավետության ցուցանիշների հիման վրա «Լավագույնների խրախուսման» կարգի մշակումը և ներդրումը,

4.1.7. Համալսարանում հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերում ուսումնառող ասպիրանտ/հայցորդների ուսման վարձի համար զեղչի կիրառումը,

4.1.8. կրթական վճարովի ծառայությունների մատուցմամբ գիտական հետազոտությունների արդյունքների հնարավոր առևտրայնացումը:

4.2. Ըստ սահմանված առաջնահերթությունների գիտահետազոտական գործունեության զարգացումը խրախուսող մեխանիզմներից ակնկալվող արդյունքներն են.

4.2.1. ուսումնական գործընթացում գիտահետազոտական գործունեության ներդրված արդյունքներ,

4.2.2. հետազոտությունների իրականացման զարգացած հմտություններ ունեցող գիտամանկավարժական և ուսանողական համակազմի թվի աճ,

4.2.3. գիտահետազոտական գործունեություն ծավալող գիտամանկավարժական և ուսանողական համակազմի թվի աճ,

4.2.4. գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերում գիտամանկավարժական և ուսանողական համակազմերի թվի աճ,

4.2.5. հրատարակվող աշխատությունների թվի աճ՝ հատկապես միջազգային բարձր վարկանիշավորում ունեցող ամսագրերում և միջազգային գիտաժողովների նյութերի ժողովածուներում,

4.2.6. միջազգային և ՀՀ խոշոր գիտական ծրագրերին ինտեգրվելու հնարավորություն,

4.2.7. առևտրայնացված գիտական հետազոտությունների արդյունքներ:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Գիտահետազոտական գործունեության հիմնական ուղղությունների և առաջնահերթությունների սահմանումը և վերջիններիս զարգացումը խրախուսող մեխանիզմների ներդրումը չեն ենթադրում, որ գիտահետազոտական

գործունեության այլ ուղղությունները աջակցություն չեն ստանալու և չեն խրախուսվելու (մասնավորապես, աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհ, գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման համար լրավճար տրամադրվում են առկա գիտահետազոտական բոլոր ուղղություններով):

5.2. Սույն Հայեցակարգը, վերջինիս մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ:

5.3. Սույն Հայեցակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: